

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 26/3

22 մայիսի 2013թ.

Քննարկվեց «Հաշվողական տեխնիկայի և ինֆորմատիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ 10.04.2013թ. թիվ 1/40 դիմում-բողոքը «ԿԱ ՊԵԿ ՕՇՎ 04.04.2013թ. թիվ 1003930 ստուգման ակտի դեմ:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի 11.10.2012թ. թիվ 1003930 հանձնարարագրի «Օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Հաշվողական տեխնիկայի և ինֆորմատիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող «Օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է «ԿԱ ՊԵԿ ՕՇՎ 04.04.2013թ. թիվ 1003930 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 42.766.988 դրամ:

«Հաշվողական տեխնիկայի և ինֆորմատիկայի ԳՀԻ» ՓԲԸ բողոքում մասնավորապես նշված է.

կարծում ենք, որ ստուգման ակտի 1-ի կետով արված պատճառաբանությունն անհիմն է, քանի որ «ՍԻ Այ ԹԻ» ՍՊԸ-ի ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակում ընկերության կողմից 2.700.000 ԱՄՆ դոլարի չափով վարկ ստանալը և «ՍԻ Այ ԹԻ» ՍՊԸ-ին 2.470.000 ԱՄՆ դոլարի չափով անտոկոս փոխառություն տրամադրելը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ այդ ժամանակ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գույքերը գրավադրված են եղել «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ-ում 13.09.2007թ., 16.10.2008թ., և 13.02.2009թ.-ին «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ, ընկերության և «ՍԻ Այ ԹԻ» ՍՊԸ միջև կնքված թիվ 6203Ա, թիվ 062-014Ա և թիվ 6203Ա-09 ոչ բնակելի տարածքի հիփոթեքի պայմանագրերով, որոնցով նախատեսված գրավառուի իրավունքները «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ-ն զիջել էր «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ին՝ նրանց միջև 18.06.2010թ.-ին կնքված պայմանագրով:

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ից վարկը ստանալու պահին ընկերության եկամուտների հիմնական աղբյուրները՝ այդ գրավադրված գույքերի վարձակալությունից ստացվող վարձավճարներն էին: Եվ եթե ընկերությունը չստանար վարկը և վարկային միջոցների մի մասն առանց տոկոսի չտրամադրեր «ՍԻ Այ ԹԻ» ՍՊԸ-ին, ապա բռնագանձումը կտարածվեր ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գույքերի վրա և ընկերությունը կգրկվեր այդ գույքերի վարձավճարների չափով եկամուտներ ստանալու հնարավորությունից: Այսինքն, այդ վարկի շնորհիվ է, որ ընկերության կողմից վարձակալության հանձնված գույքերի վրա բռնագանձում չի տարածվել և մինչ օրս էլ ընկերությունը այդ գույքերից ստանում է եկամուտներ՝ վարձավճարների չափով: Դա նշանակում է, որ վարկի տոկոսների վճարումը եղել է ընկերության կողմից եկամտի ստացման հետ կապված և դրա համար անհրաժեշտ ծախսեր և պետք է համախառն եկամտից նվազեցվեր: «Ետևաբար, անհիմն է ակտում նշված այն պատճառաբանությունը, որ նշված վարկը չի մասնակցել ընկերության համախառն եկամտի ստացմանը, սակայն վարկի տոկոսները համախառն եկամտից ամբողջությամբ նվազեցվել է, որի արդյունքում 2011թ.-ի տարեկան շահութահարկի հաշվարկով առաջացել է հարկային վնաս՝ 17275273 դրամի չափով և Ընկերությունը խախտել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները:

Դրանից բացի, Ընկերության կողմից վերցված (ներգրավված) վարկերի կամ փոխառությունների գումարների նկատմամբ հաշվարկվող տոկոսները, եթե դրանք անտոկոս տրամադրվում են այլ անձանց, համախառն եկամտից նվազեցնելը արգելվել է 19.12.2012թ.--

ին ընդունված և 01.01.2013թ.-ին ուժի մեջ մտած «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-238-Ն ՀՀ օրենքով, որով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ «ժե» նոր ենթակետով:

Իսկ 2011թ.-ի համախառն եկամուտը որոշելու պահին գործող օրենսդրությամբ նման սահմանափակում նախատեսված չի եղել և նույն օրենքի 10 հոդվածի 2-րդ մասի «է» ենթակետի համաձայն՝ վարկերի և այլ փոխառությունների տոկոսները դասվել են համախառն եկամտից նվազեցվող ծախսերի մեջ՝ առանց որևէ բացառության: Հետևաբար, ընկերության 2011թ.-ի համախառն եկամուտը որոշելիս վարկի տոկոսների չափով նվազեցումները կատարվել են այդ պահին գործող օրենսդրությանը համապատասխան:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է վերացնել (անվավեր ճանաչել կամ հաստատել դրա առոչինչ լինելը) կամ չեղյալ ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 04.04.2013թ. թիվ 1003930 ակտի 1-ին կետը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցիչների և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

Ըստ ներկայացված սկզբնական փաստաթղթերի ստուգմամբ պարզվեց, որ 2011թ-ի տարեկան շահութահարկի հաշվարկում, համախառն եկամտից իրականացվող նվազեցումներն ավել են հաշվարկվել 109750273 դրամ (125080697 դրամ վարկի տոկոս - 15330424 վաճառված անշարժ գույքի մնացորդային արժեքը), որի արդյունքում առաջացել է վնաս՝ 17275273 դրամ: Վարկի տոկոսի մարման համար «Հաշվողական տեխնիկայի և ինֆորմատիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ն վաճառել է բանկի համաձայնությամբ գրավադրված անշարժ գույքի 2-րդ հարկը, ընդհանուր գումարով՝ 125080670 դրամ, որի մնացորդային արժեքը կազմում էր 15330424 դրամ:

Պարզաբանում - Բանկի վարկի տոկոսը, գումարով՝ 125080697 դրամ, որը վճարել է «Հաշվողական տեխնիկայի և ինֆորմատիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ն ըստ էության պետք է վճարեր «Սի.Այ.Թի» ՍՊԸ, քանի որ վարկը տրամադրվել էր վերջինիս առողջացման ծրագրի իրականացման համար, գրավի առարկան ընկերության սեփականությունը հանդիսացող շինությունն էր: Նշված վարկը չի մասնակցել «Հաշվողական տեխնիկայի և ինֆորմատիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի համախառն եկամտի ստացմանը, սակայն վարկի տոկոսները համախառն եկամտից ամբողջությամբ նվազեցվել են, որի արդյունքում 2011թ-ի տարեկան շահութահարկի հաշվարկով առաջացել է հարկային վնաս՝ 17275273 դրամի:

Համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի հարկային մարմնին ներկայացված շահութահարկի հաշվարկում օրենքով սահմանված կարգով հարկային վնասը ավել ցույց տալու համար հարկ վճարողից գանձման է առաջադրվել տուգանք ավել ցույց տրված վնասի 20% չափով, գումարով՝ 3455059 /17275273x20%/: Խախտվել են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, որի հետևանքով ընկերությունը հարկվող շահույթը պակաս է ցույց տվել 92475000 դրամ:

Արդյունքում հիմք ընդունելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածների դրույթները, շահութահարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 41.647.234 դրամ:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ վարկը տրամադրվել է «Սի Այ Թի» ՍՊԸ առողջացման ծրագրի իրականացման համար, ուստի բանկի վարկի տոկոսները, գումարով՝ 125080697 դրամ, ըստ էության, պետք է վճարվեին «Սի Այ Թի» ՍՊԸ կողմից:

Հանձնաժողովը գտնում է, որ հիշատակված վարկը չի մասնակցել «Հաշվողական տեխնիկայի և ինֆորմատիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի համախառն

եկամտի ստացմանը, հետևապես ղեկավարվելով <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, որի համաձայն հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով, վարկի տոկոսները համախառն եկամտից ենթակա չէին նվազեցման:

Հանձնաժողովի 30.04.2013թ-ի նիստի քննարկման արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### **ո թ ո շ ու մ է՝**

Ստուգման ակտը թողնել է անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ